# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**կնքված պայմանագրում կատարված փոփոխության մասին**

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար տոներների, տոներային քարտրիջների և չիպային քարտերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/46» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2024 թվականի հունվարի 9-ին կնքված N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/46-4» պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) 2024 թվականի հուլիսի 9-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝

Պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման համար հատկացվել են ֆինանսական միջոցներ:

Փոփոխության նկարագրություն՝

Պայմանագրի 05.03.2024թ. կնքված N 1 համաձայնագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ հավելված N 1-ը հաստատվել է նոր խմբագրությամբ:

Փոփոխության հիմնավորում՝

Պայմանագրի 8.5 և 8.15 կետեր

Պատվիրատու՝ Դատական դեպարտամենտ

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 3

## 09.01.2024թ. ԿՆՔՎԱԾ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/46-4» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան

«09» հուլիսի 2024թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավարի պարտականությունները կատարող Ա. Վարդապետյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «ՅՈՒԷՆ ՍՈՒՊՈՐՏ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գ. Թամամյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները և հիմք ընդունելով 09.01.2024թ. կնքված N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/46-4» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.15 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր)՝ հետևյալի մասին.

### 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հաշվի առնելով Պայմանագրով սահմանված 200 հատ տոներային քարտրիջներից 100 հատ տոներային քարտրիջների մասով 1499400 (մեկ միլիոն չորս հարյուր իննսունինը հազար չորս հարյուր) ՀՀ դրամի չափով ֆինանսական միջոցների առկայությունը և Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման անհրաժեշտությունը.

1.1. Պայմանագրի 05.03.2024թ. կնքված N 1 համաձայնագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ հավելված N 1-ը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N 1-ի:

### 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի N 1 հավելվածը հանդիսանում է N 3 համաձայնագրի անբաժանելի մասը:

### 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| *Դատական դեպարտամենտ* | *«ՅՈՒԷՆ ՍՈՒՊՈՐՏ» ՍՊԸ* |
| Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1 | Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0065, Ջամբուլի փ. 33 |
| ՀՎՀՀ՝ 02583241 | ՀՀՎՀ՝ 01297088 |
| Հ/Հ՝ 900011192151 | Հ/Հ՝ 1570059892050100 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «Ամերիաբանկ» ՓԲԸ |
| **Ղեկավարի պարտականությունները կատարող՝ Ա. Վարդապետյան** | **Տնօրեն՝ Գ. Թամամյան** |
| (ստորագրություն) Կ.Տ | (ստորագրություն) Կ.Տ |

Հավելված N 1
«09» հուլիսի 2024թ. կնքված N 3 համաձայնագրի

(Հավելված N 1
« 05 » մարտի 2024թ. կնքված N 1 համաձայնագրի)

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

*ՀՀ դրամ*

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | ընդամենը |
| 34 | 30121460/58 | տոներային քարտրիջներ | | | | 1499400 | 1499400 | 1499400 | 2998800 | 2998800 | 2998800 | 2998800 | 2998800 | 2998800 | 2998800 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ԳՆՈՐԴ**
***Դատական դեպարտամենտ***
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011192151
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

**Ղեկավարի պարտականությունները կատարող՝ Ա. Վարդապետյան**

(ստորագրություն)

Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
***«ՅՈՒԷՆ ՍՈՒՊՈՐՏ» ՍՊԸ***
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0065, Ջամբուլի փ. 33
ՀՀՎՀ՝ 01297088
Հ/Հ՝ 1570059892050100
«Ամերիաբանկ» ՓԲԸ

**Տնօրեն՝ Գ. Թամամյան**

(ստորագրություն)

Կ.Տ